

ԻՐՈՇԱԿ

Հ.Յ.Ղ. ԳՈՒՐՅԱ
ԱՐԽԻՎԱԿԱՆ
Ա.Ր.Բ. ԲՍՐՈ
LIBRARY

„ ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ “ ՕՐԳԱՆ

Ա Յ Բ Ա Ի Բ Ե Ն

Յունվար, 1894 թ.

Անցեալ անգամ մենք վերջացրինք այս հարցով, թե ինչ կարգեր կարող են ապահովել ժողովրդի արդարացի պահանջները:

Հարկաւոր է պարզ դնել հարցը և անսրկիւղ քննել դրան, որովհետեւ անհղձուկներն է քաղցածին հացի անց քար տալ, որովհետեւ ապուրեման է դարձան չանել հիւանդի այն վերջին, որից իսկապէս տանջւում է ինքը հիւանդը:

Ասկայն "Իսաշնակցութեան" սկիզբ առնելուց առաջ այդ հարցերը գրել և ըստ իւրեանց մշակել են երկու անելի հին հայ յեղափոխական օրգաններ. — "Արմենիա" և "Հնչակ" Իսաշնակն են հասկացել այդ օրգանները հայի ցուր և նրա ապագան բարեդրելու անհրաժեշտ պայմանները:

Իսկապէս "Արմենիայի" մասին, այն "Արմենիայի", որը ինչպէս ինքը վաղուց յայտարարել է, դադարել է յեղափոխական կազմակերպութիւն, յեղափոխական կենդանի գործի օրգան լինելուց, որն այժմ զբաղւած է անելի փողի և ուրիշ տեսակ վիճակախաղեր կանգնելով իր բաժանորդների համար, իսկապէս, ասում ենք, "Արմենիայի" մասին չարժէք խոսել, չարժէք, որովհետեւ պարզ է, որ հանդերձ իր յեղափոխական երեմիականներով, այդ թերթը հասել է բարոյական մահուան, իր նիւթական ապահովելու միակ և թըշուառ խնդրին:

Բայց մեր միտքը պարզելու համար, անելի լաւ է իտեղնք աչքի առաջ ունենալով հասարակութեան մեջ պատող, փողը Ի շատե յայտնի կարծիքներ, ծրագրիներ, ուղղութիւններ: Ինչքան և անուրոշ լինէր "Արմենիայի", այդ նախկին "Հայրենասիրաց Թիւրթիւն" օրգանի նախկին ծրագիրը, այն ծրագիրը, որը տարեցուտրի շարժել երկու անգամ նոյն ոչինչ չը պարզող խնայարարութեամբ յոյս էր տեսնում թերթի առաջին օրենսագում

սակցի սյս և այն խմբագրական առաջնորդներից նկատելի էր, որ "Արմենիայի" համար առաջնակարգ անդ էին բանում Թիւրթիւնում տեղեւ լարչական-քաղաքական թերթութիւնները: Արագընել այդ թերթութիւնները և հայի լայն բարդաւոր ժպտի հայի թշուառ կենցաղը կառուցելու անհրաժեշտ փոփոխութիւնները: Երգովն է արդեօք:

Աստուած դիտէ, ինչ էր հասկանում պ. Թորթուգանցի զարչական բարեփոխումներ ասելով, բայց աննոյն համարութեամբ կարգաւոր այդ բարոյները մշտանում էինք, ենթադրելով թէ, դիւթական մի շարժական թերթիցում իրականացաւ ներկայ ժամանակներիս համար առաջնակարգ մի եււրոպական վարչական դրութիւն: Ինչ կը լինենք մենք դատած դարձում: Ի հարկէ շատ բան, բայց ոչ այն բոլորը, ինչ հարկաւոր է ժողովրդին, ոչ այն դրութիւնը, որի անունով մի ա. յն մենք նեւներս սրտերիս վրա դըրած, առանց մեր խղիի առաջ անաչելու, կարող լինէինք քարձարանայն գտել ժողովրդին: "Հայ ժողովուրդ, առ դիր յեղափոխութեան դժոխային ուղին. կռուի, մնալի, զոհի, որդիք ու ունեցածդ, և կրք կը ստանաս այդ վարչական դրութիւնը, դու բարդաւոր կը լինես անպատանա . . .

Պարտիկ դիւղացին անկախ է, իր ներքում նա քաղաքականապէս ի շնորհ է, բայց ապահով է նրա կացութիւնը, ազատ է նա . . . ոչ, նա ստորուկ է և ազքառ: Թումանիան ազատ է, նրա քաղաքական կարգերն անձամբ են եւրոպական սահմանադրական մոդելներից, բայց ինչ է նրա դիւղացու դրութիւնը, եթէ ոչ կատարեալ նորութիւն. բոլոր աշխատանքի, բայց մեծ մասամբ անհող դիւղացիք իրականապէս պատկանում են մի քանի հազար հողատէր աշխատանքների: Իտալական ժողովուրդը, որը դեռ երեկ իտիւմպից իր վրայից Աւստրիայի լուծը և մեք բերից յաղապական ազատութիւն, ներկայումս հնում է դառն աչքաւորութեան տակ: Եւ Սիցիլիան, այն Սիցիլիան, որ իտալական ապստամբութեան յենարանն էր կազմում, որ հա-

մարձակ բարձրացրելը անպատճառութեան դրօշակն օտար կառավարութեան դէմ, հենց այս թուականը զենքը ձեռքին կռուում է իր անփական, իր արքիւնով ըստ եղծված կառավարութեան դէմ... Բեմտուն միլիտն ուս ժողովուրդը, քաղաքականապէս ազատ լինելով հանդերձ՝ այսօր այնքան աղքատ է և տղէտ, որ համարեա կենդանիների կեանք է վարում: Աերջապէս Եւրոպայի առաջնակարգ ազատ սահմանադրական երկրներում, ժողովրդի առնուազը երկու երրորդ մասը ապրում է օրէցօր, խաղում է ապրանք ստեղծող հասարակ մեքանայի դեր. անձնական և հասարակական յարաբերութիւնները մարդու համար այդ երկրներում այնքան խիստ որոշվել են, որ ոչ մի երկրում, նոյն իսկ ամենայեանդէմ երկրների հետ համեմատած, անհասն այնքան երկիրը չէ կարող ունենալ հենց վաղն անդործ մնալ և փողոցի մէջ սուլից մեռնել, որքան հենց այդ քաղաքակրթութեան մեծահոգի որրաններում: Այ փոքր 'իշատէ ծանօթ է եւրոպական ներկայ կեանքին՝ նա կարօտ չէ բացատրութիւնների. յամենայն դէպս յիշենք, որ Լօնդօն քաղաքը միայն ունի 100,000 փողոցային մուրացկաններ, որ բանւորների մշտական գործադուլներն անկարագրելի չարիքներ են առաջ բերում այդ միլիտնաւոր դասակարգի համար, դասակարգի, որը բացի իր ձեռքից և ոտքից չունի ուրիշ ոչ մի սեփականութիւն, որ եւրոպական բոլոր պարլամենտներում սօցիալիստ դէպուտատների թւի տարեցտարի աւելանալը, բանւորական յուզումները նըշան են խիստ դժգոհութեան տիրող կարգերի դէմ, որ վերջապէս անարխիզմի սարսափահար գործունէութիւնը, իբրև մեծամասնութեան դրութեան վերաբերեալ անզուսպ բողոք՝ ծնվել և զարգանում է հենց այդ երկրներում:

Ընդհանրացնելով մեր ասածները եւրոպական կարգերի բացասական կողմերի մասին՝ մենք կը կամենայինք ընթերցողի հետ գալ հետևեալ եզրակացութեան. պարզ է, որ Եւրոպան իր քաղաքական կազմակերպութիւններով այսօր բարձր է ուրիշ երկրներից. միևնոյն ժամանակ ապացուցված պիտի համարել որ այդ կազմակերպութիւններն անկարող են ապահովել ժողովրդի բարեկեցութիւնը և հետևաբար իրենց տիպով դեռ շատ և շատ ստոր պիտի համարվին:

Մեզ կարող են ասել, որ նոյն իսկ Եւրոպայում չենք գտնում այնպիսի քաղաքական ձևեր, որոնց մենք հաւանեինք, նախանձեինք: — Ճիշդ է. սակայն հարցը հաւանելու, չը հաւանելու մէջ չէ. հարցը միմիայն նրանումն է, որ մենք պարտաւոր ենք չը ծածկել մեր հասարակութիւնից եւրոպական քաղաքական կազմակերպութիւնների անկարողութիւնն իրենց ժողովրդի բարօրութիւնն ապահովելու, տալու նրան այն, ինչի նա այսօր ձգտում է:

Ծածկել այս ամենը ժողովրդից, երբ մենք նրան բարօրութեան անունով կոչում ենք դէպի յեղափոխութիւն՝ այդ անխղճութիւն է մի կողմից՝ և անհաշիւ կարճատեսութիւն միւս կողմից: Թող նա իմանայ այս ամենը, որպէս զի յեղափոխական մի շարժումից յետոյ, իրականացած չը տեսնելով իր իղձերը՝ յուսաբեկութեան և ըհակցիայի չը հակի: Թող նա իմանայ այդ ամենը, որպէս զի երբէք նա երես չը դարձնի երկրի յառաջագէմ ինտելիգենտ-յեղափոխականներից, որպէս զի վաղը կարճատեսութեամբ չը մերժէ այն, ինչ այսօր արեան գետեր թափելով՝ ձեռք բերած կը լինի...

Արթուր և Գրեյս (Վը շարունակվի)

Ա Ր Օ Շ Ա Վ Յ Ի Կ Ռ Ի Է Ը

Անցեալ համարում մենք հաղորդեցինք իբրև լուր Արաբոյի խմբի կոտորվելու մասին: Դժբաղդաբար այդ լուրը մասամբ հաստատվում է: Ընդհարումը տեղի է ունենում Խնուսի և Մուշի մէջ գտնված գիւղերից մեկում: Գորա հետևանքը շատ կորստաբեր է եղել մեզ համար: Աուող խմբից ազատվում է մի մշեցի երիտասարդ, որը վիրավորված է և այժմ գտնվում է ապահով տեղում, Տաճկաց սահմանից դուրս: Ահա նրա պատմածն այդ դէպքի մասին:

"Ես Տամատեանի և Մ-ի մարդն եմ: Յունաստանից վերադառնալով, անցայ Խնուս և սպասում էի Մ-ին: Լեեցի Արաբոյի Խնուս գալն իր 17 ընկերներով, Վեռնի մահը... գնացի միացայ նրա հետ, յայտնելով կատարեալ պատրաստականութիւն հնազանդվիլ նրա բոլոր հրամաններին: Միևնոյն է Մ-ն է, թէ Արաբօն, կամ Արդանը. ամենքն էլ գործին են ծառայում:

Արաբօն Ղօզլի սարից ազատվելով՝ իջնում է համանուն գիւղը, այնտեղից անցնում Ըաբատին, ուր և ինձ ընդունեց իր խմբի մէջ: Անցանք Խայեաքեօփրու, Խարաջօբան, Համզալէյի գիւղերը (իբրև թէ մահմեդականութիւն ընդունողներ են եղել այդ տեղերում), սուտ է բոլորովին), և հասանք Խօշգեղդի: Այստեղ մենք մտանք 6 ընկերներով. Արդանն էր, Արաբօն, Աւօն, Մարտօն, Բուլղարն և ես: Մնացած 10-ին տուինք 10 հրացան ու ցրվեցինք ամենքին իր գիւղը: Մուշն ընկել էր. մտանք Խօշգեղդի գիւղ և անկատարի կերպով մտանք մի մարագ գիշերն անցկացնելու: Գիւղացիք իմացան: Տանտէրը խնդրում, աղաչում էր սարսափած հեռանալ մարագից: — Տնով տեղով ինձ կը կորցնեն, կը պօռար նա: Նրան մի կերպ հանգստացրինք: Գիւղի տանուտէրը վախից ձի նստաւ և գիւղից հեռացաւ, որ եթէ մի բան պատահի, ինքն արգաբանայ իր բացակայութեամբ: Նստել էինք մարագում, զենքեր էինք սրբում և քաղցած հացի վրա մտածում: Գիւղում ամեն մարդ սարսափած իր տունն էր քաշվել, գողում էին վախերիցը: Մարագի երթկիցը մի կտոր թուղթ ներս գցեցին: Արդանը կարգաց. "Ձգողը և արթուն կացէք, զենքերդ պատրաստ. Սատուած գիտէ, թէ ինչ կարող է պատահիլ. վախեցած քեօխման, որ գիւղից փախաւ,

կարող է մատնել: Չորս կողմերն քիւրդեր են:՝ Քիչ տն-
ցած, մտաւ մարագը մի երիտասարդ, մեզ կեռակուր
բերեց Տօրից գաղտնի: Արաբօն նրան պատուիրեց մի
քանի ընկերներով գիւղից դուրս, շրջակայքում հսկել
և հենց որ մի կասկածելի բան նշմարեն, իսկոյն մեզ
իմաց տան, մինչև որ մենք մի քիչ հանգստանանք: Քիչ
հանգստացանք, կէս դիշերին ճանապարհ ընկանք: Պե-
րնչ չը պատահեց: Երբ լուսացաւ, արդէն մտել էինք
Գ Ե Օ Լ Ա Ռ ա շ Ո Ւ ձ որը. աւազակներու մտել էինք ա-
ւազականոցը: Այդ ձորի երկարութեամբ շարունակեցինք
ճանապարհներս: Հասանք մի մացառոտ տեղ, նստանք
աղբերակի մը մօտ, հանգստացանք: Ահս օրէն անցել էր:
Արաբօն վեր կացրեց մեզ շարունակելու ճանապարհնե-
րուս նոյն դժով, ձորի երկարութեամբ, որ բացվում է
Փշոյ դաշտի մէջ: Աւշի վրա բարկացաւ Արաբօն, երբ
նա խորհուրդ տուեց սպասել մինչև մթնելը: Քիւրդե-
րի Գեօլ Առաշ գիւղը մօտ էր, նրա միջով էր ընկնում
ճանապարհը: Գէհ, Արաբօն է, ում կը լսէ: "Լեզէկ ծած-
կեցէ՛ք դուխներդ, եթէ քիւրդերից այդքան կը մտնու-
նաք", բարկացաւ Արաբօն: Ճանապարհ ընկանք: Հազը-
ված էինք Համիդիէի ձևով: — Հո՛ւստ կուգաք, հարց-
րեց մեզ մի քիւրդ կին, երբ մենք արդէն Գեօլ Առաշ
գիւղով էինք անցնում: — Խնուտ, պատասխանեց Արա-
բօն: Անցանք: Քիչ էինք հեռացել գիւղից, պատահե-
ցինք մի հնձուր քիւրդի: Արաբօն նրա հարցին ևս բա-
ւականութիւն տուեց, ասելով, որ Փօքքի (Սասունի)
ենք: Աւօն, որ խմբից մի քիչ յետ էր մնացել, մօտե-
ցաւ Արաբօյին. — Այդ քիւրդը մեր հայ լինելը հասկե-
ցած է, քո պատասխանից վերջը, երբ դուք անցաք նա
քթի տակը փնթփնթաց, թէ սղքա հայեր են, ով ինչ
կուգէ ասէ: — Ոչինչ, թող հասկնայ, եղաւ Արաբօյի պա-
տասխանը: Շարունակում եմ ք առաջ գնալ: Յանկարծ
Աւօն ձայն է տալիս, թէ քիւրդերը հրացանները ձեռ-
քերին դուրս են գալիս գիւղից դէպի մեր կողմը: Հա-
զիւ նա վերջացրեց իր խօսքը, երբ լսվեց հրացանի պայ-
թում: Քիւրդերը, թեթեւ հագնված, թարմ, մեզ պէս
ճանապարհից, անքուն գիշերներից չը յոգնած, արագու-
թեամբ մօտենում էին: Լսվեց երկրորդ գնդակի շվա-
ցը: Այս անգամ Արաբօն պատասխանեց նոյն կերպով:
Քիւրդերն արձակելով գալիս էին: մենք պատասխանում
էինք և շարունակում ճանապարհներս: Քիւրդերը քա-
նի գնում շատանում էին ու մօտենում: Հեռուից երե-
ւում էր, թէ գիւղում ի՛նչ իրարանցում կար: բոլորը
դէպի մեզ են վազում: — Տղէք, դէպի սարը, կանչեց
Արաբօն: Ճանապարհներս փոխեցինք. բարձրանում էինք
մացառների միջով: Հրացանաձգութիւնը տաքանում է:
Մենք բարձրանում ենք սարի լանջով, իրարուց բաւա-
կան հեռու: Քիւրդերն աչքերիս չեն երևում. հրացա-
նի ծուխը բռնել է ձորը. մենք կրակում ենք դէպի այն
կողմը, որտեղից ծուխ է երևում: Քիւրդերի մի մասը
ակներև է, բարձրացել է ձորի մեր հակառակ, հանդի-
պակ լանջը. ծուխեր են երևում մեզ հաւասար բարձրու-
թեան վրա, ձորի ստորոտից: Հրացանների որոտը մի-
ախառնվում է արձագանգի հետ: — Ոտքիցս վերադար-
վեցի, տղէք, կանչեց յանկարծ ետևից Աւօն և կանգ

առաւ: — Հրացանդ շարունակիր նստած գցել, եղաւ Ա-
րաբօյի պատասխանը, եթէ չես կարող քայլել, կամ
քայլիք առաջ, քանի որ դեռ վէրքդ տաք է: Աւօն յետ
մնաց: Յանկարծ ծխի քուլաներ երևացին և հրացան-
ների պայթոց լսվեց մեր գլխի վրայից. մեզ շրջապա-
տել էին անիրաւները: Գնտակները կարկտի պէս տե-
ղում էին չորս կողմից. ձորը կրակի մէջ էր: Յնցվեցի
յանկարծ, ձեռքս չօլի պէս կախ ընկաւ, երկրորդ հր-
րացանս ընկաւ. գետին (ես երկու հրացան էի տանում).
վերադարձած էի ձախ թևիցս: Շարունակեցի աւելի ա-
րագ բարձրանալ: Արդանն ու Արաբօն ցատկում էին
մացառից մացառ, քարից քար, բարձրանալով սարն ի
վեր: Ես հրացանս ու ձախ թևս աջովս բռնած, հե-
տևում էի նրանց, երբ գնդակի տարափից, որ բռնկեց-
րեց ամբողջ ձորը, ընկան Մարտօն, Գուլղաբն ու Աւօն,
որ կաղաղով վազում էր յետևից: Ես էլ ընկայ, բայց
յօղնածութիւնից և արիւն գնալուց: Գլխիս վրայից
անցնում էին իրար յետևից ջուխտ ջուխտ գնտակներ.
Գնտակներ, գնտակներ... դատարկ մի գնաք, սրտեր
պատռեցէք... մրմնջում էի ես: Եթէ հնարաւոր լինէր,
ես կըցանկանայի, որ մի վարկեան կանգ առնեն այդ
Չ ու խ ա Չ ու խ ա գնտակները, մօտենան ինձ, որ ի-
րանց համբուրեմ ու ձեռքովս աւելի ուժեղ հրեմ, որ
արագանան, քիւրդեր տապալեն: Այդ ջուխտ գնտակ-
ներն Արաբօյի ու Արդանի գնտակներն էին, ես այդ
ակներև զգում էի. շատ մօտից էր դրանց և ձայնը և
ուղղութիւնը...

Կորուստն ինձ համար սներկբայելի էր: Պայուսակս
քանդեցի, մէջը թղթեր, շուշաներով դեղեր կար մա-
ցառների մէջ պահեցի, որ անիրաւներն ինձ սպանելիս
պայուսակիս չը տիրանան: Մի ձեռքով մի կերպ դուրս
չբարձրեցի հրացանի միջի գատարկ փամփուշտը, նոյնպէս
մի ձեռքով մի լիքը փամփուշտ դրի մէջը, հրացանի փո-
ղը բարձրացրի, մացառների ճիւղքերին դրի և կիսա-
պառկած սպասում եմ, թէ երբ պիտի գան քիւրդերը,
և թէ ո՞վ պիտի լինի ինձ գրակի տեղ ընդունող քիւր-
դը... Գուցէ մի գազան էլ աղասի, մի բէյ, մի թար-
վում էի ես:

Գլխիս վերևից սլանում են շվշվաղով իմ բարեկամ
գնտակները: Նոյնպէս անբաժան, մէկը միւսի ետևից.
զյգ են սիրելի գնտակները, կենդանի են նոքա, կեն-
դանի են Արաբօն ու Արդանը: Որքան շարունակեց
այդ չը դիտեմ: Յանկարծ լուեց ամեն ինչ: Մուծն է...
Բարձրանում եմ տեղիցս, վեր եմ առնում պայուսակս,
թաշում եմ ուսիս, հրացանս էլ ուսիս գցում. ձախ
ձեռքս բռնած՝ չորս կողմս եմ նայում, ակնը դնում:
Գերեզմանային լուծիւն է տիրում: Առաջ եմ գնում
դէպի վեր. սրեխներս կանաչից հարթված՝ սլացնում
են ինձ բարձրացած մի քայլի փոխարէն. 10 քայլ ներ-
քև. նորից բարձրանում եմ, նորից ցած գլորվում. ան-
օգուտ է... Պարձնում եմ երեսս դէպի ձորը, իջնում
եմ գգուշութեամբ: Ձայնիս եմ լսում, սիրտս տրոփում
է, կզկթում եմ: Ոտքի ձայններն իջնում են ձորի լան-
ջից ցածր: Աւջ, վայ... քիւրդ կանանց լացի ձայն էր
այդ. տեսնես, ում են կորցրել, ում են ողբում, մտա-

ժապետեան և ուրիշ վեց անձինք ալ, իբր թէ սորա յիշեալ մասնեաց վրա ընկալ պարպելով՝ սպանութեան փորձ ըրած են և չեն յաջողած: Անշիդ էֆ. անուն հարիւրապետ հարկապահանջութեան մը խնդրոյ համար, Մշոյ հինգ թաղերու մուխթարները ՚ի մի հաւաքելէ վերջ, երբ կը սկսի անասելի լուսանքներ և հայհոյութիւններ տեղացնել անոնց վրայ, օրէնք, ազդութիւն, պատիւ, ընտանիք . . . հայերէն մինը կատաղած բոլոր հայհոյութիւնք իրեն կը դարձնէ և վրան կը յարձակի ծեծելու. ուրիշ հայ մ'ալ դրսէն հասնելով՝ կը հետևի առաջինի օրինակին և լաւ մը ծեծ կը քաշեն հարիւրապետին:

Մ Ս Ս Ո Ւ Ն ա պ ս տ ա մ բ ա կ ա ն վ ի ճ ա կ ի մ է ջ :

Սուլթանի կառավարութեան խժոժութիւնքն ու բռնած ընթացքն միեւնոյն հայ ժողովուրդը դէպ յեղափոխական կրակն ու հրդեհն: Երբ Տամատեան ձերբակալ վեցաւ, երեք օր չանցած՝ Մշոյ յիսնապետ Իսկէնդէր աղան 15-20- ոստիկաններով Սասնոյ կից Շէնք գիւղի վրա յարձակում գործեց՝ գիւղի գլխաւորները ձերբակալելու նպատակաւ, քանզի նոյն յեղափոխականը Շէնք գիւղի քովերը ձերբակալված է պատճառելով: Նաև հովիւներուն կը հանդիպին, կը սկսեն հրացան արձակել անոնց վրա՝ սորա փակելով՝ գիւղը հաւար կը ձգեն: Գիւղի ուս Գրիգոր անցած գիւղացոց գլուխ առջևներն կենէ, կը սկսի կոխել, ոստիկանք մի դիակ թողնելով կը փակեն:

Սասնու գիւղը քարուտ լինելով՝ հող չունեն գիւղացիք. ընտանեաց օրապահին հազիւ կրնային հայթայթել ամեն տարի Տիգրանակերտի և Մշոյ դաշտերը կարաւաններով երթալով, բայց կառավարութեան դրոյմամբ քիւրդ աշիրէթներէն ճամբաները գոցած տեսնելով՝ այսօր լոկ բանջարեղէններով կապրին: Եթէ Տիգրանակերտի դաշտն երթան, Բագրանցի և Խիզանցի աշիրէթներէն կը կողոպտին, կը սպանվին. եթէ Մշոյ դաշտն երթան, տաճիկ ժողովուրդ և կառավարութիւնը կը ձերբակալեն, կը կողոպտեն, կը ծեծեն, պատճառ՝ իբր թէ յեղափոխականաց ապստարան եղած են:

Կառավարութեան ամենամեծ աշխատանքն եղաւ նախ Սասուն և Գաւառ աւերել, այս նպատակաւ Ձիւնանց Շէյն Մէհմէդին և մօլլա Ամարին հարիւրաւոր նամակներ, յատուկ տաճիկ պաշտօնեաներ զրկեց իրեն կողմ քաշելու և յաջողեց: Այդ կրօնամոլ Շէյններն ալ ամբողջ աշիրէթներն համոզեցին, ըսելով թէ քրիստոնէի կին և աղջիկ առևանդել արդարութիւն է, զայն կողոպտել Աստուծային գործ մը կատարել է, զայն սպանելով հիւրի պիտի առնէք Աստուծոյ ձէննաթին մէջ: Այսպիսով աշիրէթներն գրգռելով՝ կառավարիկեն Սասնոյ վրա քայլելլ Սասունը ոտնակոխ ընելլ քանզի Սասուն մտադիր է կառավարութեան դէմ ապստամբելլ: Հրաման եկած է մեզ կառավարութենէն հնազանդութեան բերել . . . Այս յախուռն բազմութիւն կերդէն ՚ի միասին Շէյնի և Մեծ-Մարգարէյի անուան վրա ետ չը դառնալլ մինչև Տալլօրիկի հիմքը չը քակեն:

Յունիսի 14-ին Չելանցի, Ըբեղադանցի, Ռաշքօնթցի, Գատըքանցի, Խիզանցի և Բագրանցի աշիրէթներն

սկսան քալել դէպի Տալլօրիկ: Երբ այդ ձայնը հրատարակեցաւ, Կելիէկուզան և Շէնք գիւղերու գլխաւորներն երիտասարդները հաւաքելով օգնութեան կը հասնին ՚ի Տալլօրիկ: Երկրորդ օր, Յունիս 15-ին, հայոց և քրդաց մէջ ընդհարում եղաւ. թէև քրդեր շատ ու շատ էին հայերէն, բայց Սասունցիք քարանց ծերպերու մէջ մտնելով՝ կը սկսեն կռիւր: Քիւրդեր երբ կը տեսնեն հայոց աներկիւղ յարձակումն, ետ կը փախչին: Ճանապարհին կը պատահին Տիգրանակերտ դաշտէն եկած զօրքին, որ իրենց օգնութեան կը դար հարիւրապետ Իօմեր աղայի առաջնորդութեամբ, և ետ կը դառնան: Հայոց թիւ հազիւ հասնէր 200-ի, որը ձանձրացած լինելով նեղ ու թշուառ կեանքէն, ընտրած էին մահը ըսելով. "որմը անպատճառ պիտի մեռնինք, թող՝ այսօր ըլլայ մեր մահուան օրը. թող մենք մեռնենք, դոնէ մեր սերունդ ապրի մեր արիւնով ձեռք բերած ազատութիւնով:"

Յունիսի 16-ին երեք միացեալ գիւղերու երիտասարդները Տալլօրիկի Մերզեր կոչված բլրակի գոուխն երեք մաս բաժանված արշալոյսին կը սպասէին կռուի ժամուն: Կանայք կը խրատուսէն ըսելով. "քաջ եղէք, պատու մեռէք, մեր Մարաբէն ձեզ օգնական:" Աերջապէս Յունիսի 17-ին թան ու թանահար նախաճաշիկ ընելէն վերջ, ժամը երեքին բացվեցաւ կռիւր: Քաջ Սասունցիք իրարու ձայն և խրատոյս տալով գնաակները թշնամու վրա կը թափեն: Քիւրդք իրարու վրա կը գլորվին, բայց չեն նահանջել, այլ Մօլլա Օմարի առաջնորդութեամբ հայերին չորս կողմէն կը պաշարեն, ուստի հայերը յետ կը նահանջեն Տալլօրիկի ամուր ապառաժներու մէջ և կը սկսեն աւելի սաստիկ կռիւ. Սասունի կանայք ալ կ'օգնեն իրենց էրկիներին: Այն գիւղեր, որ քիւրդեր տիրել էին հայոց յետ նահանջման ժամանակ, Շէյնի և կառավարութեան պատուիրանաց համեմատ, տուններ կայրեն, կանայք և աղջկունք ապառաժներէն վար կը ձգեն, մանր տղաք կը տրտելով ջուրերու մէջ կը թափեն . . .

Աերջապէս կը հասնի դիշերը, քիւրդեր կը նահանջին, պատահած ոչխար, տաւար, ջորի, զանազան իրեղէններ հետներն առնելով: Քրդերէն սպանված է 50-էն աւելի հայերի թիւն ալ կը հասնի 50-ի. ատոնցմէ զատ շատ մը կին ու աղջիկ ապառաժներէն վայր գլորվելով կը մեռնեն, և երեխաներ ջուր կը թափվեն: Հայոց գլխաւորներէն կը սպանվին Մկրտիչ Յովհաննիսեան Աէլիէկուզանցի, Տալլօրիկցի Քլոյեանց Մկրեան Խաչօն, Տէրտերեան Պողոս անուն երիտասարդները: Քլոյեանց Մկրէն կուէն օր մը առաջ կը պոսար. "մէ հատիկ որդի ունեմ և զայն ազգին զոհ կուտամ": Աէլիէկուզանցի Մկրտիչն կասէր. "Ռիստած եմ ազգին և այսօր կը կատարեմ իմ պարտքը:"

Այս մեծ կռիւ հայերուն մեծ ոգեւորութիւն պատճառած է, իսկ կառավարութեան կատաղութիւն: Նա սկսեց զօրք հասցնել Սասնոյ շրջակայքը: Մշոյ ժողովոյ անդամ Դալիպ էֆ. և հարիւրապետ Հաճի էֆ., որոնք յայտնի են իրենց խժոժութեամբ և հարստահարութեամբ, 30 ոստիկանով կերթան Աէլիէկուզան գիւղի ուս Պետոյի տուն: Պետօն և իր եղբօր տղայ Աւօն ընկերաց պաշտպանութեամբ կը փախչին և կը պահուին. Ռստիկաններ կը սկսեն կողոպտել-իւղ պանիր, ոչխար, տաւար, հաց և այլն: Գիւ-

ղացիք գլխաւորներու և զօրքի վայրենութիւնները տեսնելով, սարսափահար, մերկ ու բոբիկ լեռնէ լեռ կը փախչեն: Երկու օր վերջ հասան 200 զօրք: Մշոյ կողմէն ալ 300 հոգի հասան, իսկ 400-էն աւել կենճի կողմէն: Այժմ Տալվորիկի 7 գիւղերը և նրա շրջակայքը, գտնված Շէնք, Սէմալ, Ալեանցիկ, Կիւլիէկուզան, Աղբիկ, Խաան, Եղկարտ գիւղերը պաշարման վիճակի մէջ են: Սասունցիք փախստական, թշնամիներէն պաշարված, քարանց ծերպերէն հաց, հաց կը պոռան . . .

Բաղէշի կուսակաւն ալ 160 ձիաւորով Գաւառի Սէմալ գիւղի մէջ նստած մէջ կողմէ կանոնաւոր զօրք կաւելացնէ: Կատըքանցի աշիրէթը կանչելով՝ Շէնք գիւղի մէջ լեցուցած է: Քիրդերը վալիի առջև հայ գիւղերու մէջ վայրենութիւններ կը նեն՝ պար, խաղ, ուրախութիւն ընելով:

Տարոնոյ ամեն հայ գիւղերու մէջ քրդական բանակներ լեցուցած, բացարձակ ճնշման հրաման տուած է: Մուշ քաղաքի մթերանոցի զէնքերը տաճիկ ժողովրդին ջրված է: Բաղէշի վալին, որ Սէմալ գիւղի մէջ նստած է, իրմէն մի քանի քայլ հեռու Շէնք գիւղէն, Պատըքանցի հռչակաւոր աւազակ Մարօն ցերեկով 9 տաւար կը տանի և Յակոբ Տէր-Առաքելեան անուն երիտասարդն ալ թրով կը կտրատի. նոյնպէս Ալեանցիք կոչված թաղի վրա յարձակվելով՝ Մարտիրոս Հայտեան կը զարնեն և քանի մ'ալ տուն կը կողոպտեն: Խալբայ ձորի երկայնութեամբ, Կալիմնուր հայաբնակ գիւղի վրա յարձակվելով, Սահակեան Թաթօ և Խզօ հայերուն երկու եզ կը տանին, և երբ սրանք ուրիշներու օգնութեամբ կը ջանան ետ առնել, Մանուկ հայն ալ վիրաւորելով, կերթան: Կը կողոպտեն Կօթէշի տունն ալ: Երբ այս ամեն չարեաց վրա վալիին կը բողոքեն, կը պատասխանէ թէ դեռ այսչափը ձեզ համար քիչ է: Այժմ Տարոնոյ որ հայն է, որ արտասուք չը թափէր, որ մայրն է, որ իր որդին չի լար, որ կոյսն է, որ իր կորցրած կուսութիւն չաւազէր . . . Կառավարութեան, վալիի և Մուստաֆա փաշայի անտանելի բարբարոս վայրենութիւններն են պատճառ Սասունի, Տարօնի այսօրուայ կուռին, այլըստամբութեան . . .

Գ Ր Օ Շ Ա Կ Ա Ր Ա Ր Բ Ն Ի Դ Ա Շ Տ

Սասուն այսպիսի դրութեան մէջ կը տատանուէր, երբ միւս կողմից Համիդիէշի հեծեալ զօրքը, օրինակ վերցնելով Աշիրէթներից, կը յարձակուի դաշտի գիւղերի վրայ կողոպտելով և կրակի մատնելով ամեն ինչ: Խեղճ հայ գիւղացին չգիտէր ինչ անել. գլխիկոր, ձեռները ծոցը դրած իր սյրուող աշխատանքի առաջ կանգնած՝ աղիողորմ կերպով կողբար:

Տարրոգով գիւղի քովը մի քիւրդ կին, տեսնելով մի քանի հասարակ ծանապարհորդներ, կը վազէ գիւղն ըսելով. «Ռուսիոյ մարդ մը տեսայ»: Իսկոյն քրդերն ահագին բազմութեամբ կը պաշարեն գիւղը՝ չնայելով, որ զանոնք կը ծանաչեն և քովերն ալ բան մը չեն դառնիր: այնուամենայնիւ կը յարձակին հայերու վրայ ու քանի մը հայ վիրաւորելով, գիւղն աւարի առնելով՝ կը դառնան: Հայերը կը դանդատին հարիւրապետ Իսկէնդէրին, բայց նոցա խընդիրն ապարդիւն կանցնի:

Համիդիէշի հեծելազօրքի հարիւրապետ Իպօի աւազա-

կային խումբը, օր ցերեկով յարձակուելով Պագրու գիւղի վրայ, 21 գուռն կով ու եղ կը տանի: Երբ կը դիմեն հաջի Ֆէյիս կըսէ. այդ քիւրդեր զսպել մեր կարողութենէ վեր է:

Սոյն խումբը յարձակուելով կրկին Հայկերա ու Գոնս գիւղերի և խումբ մը պանդխտութենէ դարձող խեղճ հայերու վրայ գիւղացիներու ոչխարներն ամբողջովին կը տանին, իսկ դարձող պանդուխտ մշակներէն երկու ձի, ջրի մը և 80 ոսկիէ աւելի ստակ կը խլեն:

Դաշտի հարաւարեմտեան լեռանց ծոցորտներ գտնուող գիւղեր որք քիւրդերու յարձակումներէ, որն ալ կառավարութեան ոստիկաններու աւարառութենէ քար ու քանդ եղան: Մշոյ ոստիկանութեան հարիւրապետ Իսկէնդէրը 20 ոստիկաններով այս գիւղերը կը շրջի: Հայհոյանք թափելով գիւղացոց վրայ, գիւղէն դուրս կը բռնէ հարկ ճարելու համար, իսկ ինքը ոստիկաններու հետ կերթան նոցա կանանց քով ամուսիններուն փոխարինելու: Խեղճ հայ կինն անպատուած, արցունք աչքերուն, հեկեկալով, քրդի բազկաց մէջ կանիծէ իր վիճակը:

Ղզլաղաճ գիւղէն տարիէ մի վեր 2 փախստականի պատճառով, գիւղի գլխաւորը՝ Յովհաննէս, Առաքել, Գեորգ և Արթին, ձերբակալելով, Մշոյ բանդը կը ղրկեն. յետոյ փախստականներու եղբայրները կը պահանջեն, բայց նոքա կը փախչին, որի պատճառաւ և կը սկսեն ամեն պատահողի ձերբակալել: Այս ձերբակալածներէն Խաչիկ ու Կարապետ երիտասարդներէն քրքանով ակռաները կը քաշեն և այնքան կը տանջեն, որ կիսամահ վայր կը նկնին:

Առաքելը Մուշ բանդարկելէ վերջ, Մէհմետ անուն քիւրդը մարդ ղրկելով անոր կնոջ քով, կը խոստանայ ամուսնուն բաց թողնել, եթէ թող կը տայ միայն առեւանգել զինքը: Առաքելի կինը հայհոյելով դուրս կանէ եկած մարդուն և չնդուներ նորա առաջարկը:

Տարրոգով գիւղէն ձերբակալած են Գաւօ, Սահակ և Առքէ անուն երիտասարդները, Սուլթանէն պատուանշան մը կորցրու մտադրութեամբ:

Լուր կը պարտի թէ կաշառք կուգին, որ Գղը-Աղաճ գիւղի ձերբակալք արձակեն:

Չայս ձերբակալելալք ու փախստականք մատնած են Գոմեր գիւղի Տէր-Սարգիս և Ս. Յովհաննէս վանուց վանահայր Մկրտիչ վարդապետ Գասպարեան, որք այժմ սիրելի են յաչս կառավարութեան:

Կախսերգէրի խումբը, որ վերջերս եկած է իբր թէ Հայերուն պահպանելու, Խէյպան գիւղացի Առաքել Տէր Աւետիսեանը կը ձերբակալէ Մուշի մէջ բանտարկուած Տէր Կերես Խարախանեանի անունը տալու համար:

Փողարկով գիւղի մէջ Մուրադ Հաղոյեան անուն երիտասարդի մը ծեծելով խոտի կուղարկեն. երբ նա կերթայ քանի մը քայլ՝ մարթինի հրացանով գետին կը փռեն՝ արագ չգնալուն պատճառով:

Ն Ա Մ Ա Կ Պ Օ Լ Ս Ի Յ

Գաւառներու մէջ թիւրքերու բարբարոսական վարմունքը հայ բանտարկեալներու դէմ հանրածանօթ է: Պակաս չէ և Պոլսում: Նոյնմբերի վերջերին հետեւեալն է տեղի ունեցած տեղոյս բանտերէն մէկու մէջ հայ բան-

տարկեալներու հետ, որ յայտնվեց, չընայած կառավարութեան ձեռք առած խիստ գաղտնապահութեան այդ մասին: Հայ բանտարկեալներու հետ ունեցած այդ խրժեղ ժական վարմունք ամենուրեք յուրումը զայրոյթ և զզուանք առաջ բերան դէպի կառավարութիւնը և մեծ կարեկցութիւն դէպի հայ բանտարկեալները:

Ահա դէպքը.— Այս-Սօփիի քովի բանտի մէջ կը գտնուէին մօտ 500 հայ բանտարկեալներ (Պօլսի բանտարկեալներէ 100-էն 95-ը հայեր են): Յիշեալ բանտի հայերը լուր առնելով, որ Պօ սի մէջ քօլերան կը ձարակի և բազմաթիւ զօհեր կը տանի, կը սարսափեն: Իրենց ահագին թիւը տուէնի պէս իրար վրա դիզված է. բանտի աղտոտութիւնը, ապականված օդը, վատթար սնունդը, մարմնի անմաքրութիւնը, լաթեղու աղտոտութիւնը— այս ամենը վարկեան մը առջևնին պատկերելով, մահերն կը տեսնեն և կը կորցնեն կերպով մը զարմանել իրենց թշուառ կեանքը: Արտօրհրկեցին դիմում մը ընել կառավարութեան և աղերսել կամ իրենց ուղարկել արտարկայերը համաձայն տրված վճիռներուն և կամ իրենց վիճակը բարւոքեն: Երկու խնդիրներն ալ անյսելի կը մնան: Ասոնք մեծաւ մասամբ գատապարտված են որը բերգակալութեան, որը բանտարկութեան, որը արքայի բայց ցարդ կը պահուէին Պօլսի բանտերի մէջ: Ամենուրեք բանտերը լեցուն են, մինչև իսկ վերջերս նոր բանտեր կառուցանելու հրամաններ եղաւ. քանի մը տուններ բանտի փոխարկված են: Մերժումը կը յուսահատուցանէ բանտարկեալները: Ասոնք յուսահատական ցոյց մը կընեն և 2 օր կը մերժեն իրենց տրված ցամաք հաց ու ջուրը և կը պահանջեն, որ իրենց խնդիրները լսվեն և գործադրվին: Հակառակ պարագային նախապատիւ կը համարեն անթութեանն և մեռնելը քան թէ քօլերայէն: Ամեն տեսակ սպառնալիք, հայհոյանք ու անարգանք անօգուտ կ'անցնին: Կառավարութիւնը եղելութիւնը կ'իմանայ, եղբայրի վերջին դէպքերէն կատաղած, խելահորոյս հրաման կարձակէ ջարդ մը, ծեծ մը քաշել բանտարկեալներուն: Բանտապետը զապտիաներու հետ զինված խարաղաններով, մահակներով և հրացաններով ներս կը մտնի բանտը և վերջին անգամ կը հրամայէ խոնարհվել և հաց ու ջուր ընդունել: Բանտարկեալները նորէն կը մերժեն և կը պնդեն, որ իրենց պահանջները կատարեն: Բանտապետը կրակ կը կտրի բարկութենէն և կը հրամայէ զապտիաներուն սկսել ջարդը: Ան ատեն կը բացվի սոսկալի, քսումնելի տեսարան մը, որ լըսողի վրա անգամ սարսափ կազդէ: Այդ միջոցին բանտը կատարեալ դժոխքի փոխված էր— զապտիաները սոսկալի ջարդ մը կը սկսեն: Բանտարկեալներու վայնասունը, գոռոմ-գոռոմը երկինք կը հասնի. բանտապետը ողևորված այդ արտակարգ տեսարանէն և աղիողրով ձայներէն, որոնք երաժշտութենէն աւելի քաղցր կուգային բանտապետին, կանգնած տեղէն կորոտայ եղբւր— վուրն, վուրն... Ջարդը կը տևէ այն քան, մինչև զապտիաներ կը յոգնեն և բանտարկեալները կը մարեն, կը լսեն... Հատերը անշնեցած են. բանտարկեալներու վրա ողջ տեղ չէ մնացած. մի քանիսը հիւանդանոց փոխադրած են. գուցէ և մեռած են յայտնի չէ:

Եւ այս խժգուժութիւնը տեղի կ'ունենան Սուլթանի

մայրաքաղաքի մէջ, դեսպաններու աչքի առջև, Եւրոպայի քթի տակ...

— Մի քանի ժամանակ սրանից առաջ թիւրքերը ազգազրբեր փակցուցած էին Սուլթանի դէմ: Արդի կառավարութեան ու Սուլթանի դէմ են պայծառ թէ ազատամիտ և թէ պահանջողական կուսակցութիւնները: Արկակած վին որպէս հեղինակ ազգերու սօփտաները: Այլ լսվի թէ բաւական ձերբակալութիւններ, արքայներ և մահեր եղած են, բայց ամենախիստ լուրջութիւն և գաղտնապահութիւն գործ կը դրվի:

— Գաւառները կատարեալ սով է, բայց կառավարութիւնը կը ծածկէ և արմատիքի սղութեան կը պատրուակէ: Պատրիարքարան բազմաթիւ աղերսագրեր ստացված են անաշնորհներէն և ժողովներէն, որոնցով փութաջան օգնութիւն կը կանչեն: Կառավարութիւնը, որ աննշան ցորեն փոխադրած է, մահակահաններուն կը բաժնէ, խտրութիւն կընէ: Պատրիարքարանը անցեալները թոյլ դիմում մը կընէ, բայց անօգուտ. այս դէպքերին շունը նշանակութիւն, պատիւ ունէ, Աջըղեան ոչ:

Յ. Իսախան-Յիւսէ
Լ Ո Ւ Ր Ե Ր

Կ Ա Ղ Չ Վ Ա Ն. — Սահմանազրկում պահպան կողակների եւ մի խումբ քիւրդերի մէջ կոխ է պատահել, որին առիթ են տուել քիւրդերն առաջին անգամ հրացան ձգելով: Քրդերից 3 հոգի սպանված են, որոնց պիտի բերել են Կաղզվան պահանջից մէջը տաճկական կանոնադր գնուոր է: Թուրք կառավարութիւնը պահանջաւոր բազմաթիւն է պահանջել Տաճիկ կառավարութիւնից, թէ ձեր գնուոր քիւրդ աւագակներն մէջ ինչ է շինուում, որին պատասխանէ ստացել, թէ երեւի որսի է եղել հետները...

Սահմանազրկի ուսաց գուճը խիստ գրգռված է քիւրդերի դէմ, որոնք նոյն օրը նորից մի կողակ են սպանել:

Ա. Ա. Շ. Կ. Ն. — Սովն աւելի սուր կերպարանք է ստանում, մանաւանդ Դարաքիլիայի գաղտնաբանութեան մէջ: Խեղճ գիւղացին պիտու է դէպի սար, հաւաքում գալ, (փշի նման է) փշկով կերակրում ընտանիքը, իսկ մնացածը մանրայնում եւ դարմանի հետ տալիս պատարին: Բաւական չէ որ վաղորդ գիւղացին միջոց չունի իր թշուառ գոյութիւնը պահպանել — նրան ստիպում են պահել եւ քրդերին: Թուսաստանից գաղթած եւ անդայի քիւրդերը, որոնք միւս տարիներ գնում էին իւրեանց ձմեռանոցներ, այս օտարի թանձի փաշայի եւ գայմազամի նորից մնացին եւ նրանց ձմեռանոցներ եղան հայերի տներ: Քիւրդեր հայ գիւղացու եւ ընչքի տէրեր են դառնում: Պատուից եւ իրաւունքից զրկված գիւղացին զրկվում է եւ իր աշխատակից կենդանիներից: մէկը միւսի ետեւից սատկում են, եւ քաղցած տէրերը հիւանդ կենդանու միս ուտելով, հիւանդանում են ընդհանրապէս ջուր եւ փոր լուծութիւնով: միայն մահուան պէպքեր յաճախ չի պատահում: Բացի դրանից, այն քիւրդերն, որոնք տան մէջ են, գիշերով մտնում են անխիղճ կերպով առողջ տաւարին, ապելով որ սատկում էր, մորթեցին... Մինչև անգամ քիւրդ երեխայք ետ չեն մտնում իրանց ծնողներից: կերակուրը դեռ չեփած արկէն վերջանում է. ամեն մի երեխայ կերակուրն առաջը դնելով, ուտում է, իսկ տան տիրոջ կերխանները, վախից դռան եւ տեւից կուչ եկած, նայում են միայն. եթէ համարձակվեն ստել, թէ մենք էլ քաղցած ենք, մեզ էլ տուէք ուտենք, այն ժամանակ կամ կիմը կամ երեխաներից մէկը յարձակուում է եւ ծեծում, մինչև որ երեխան ստիպւած կ'ըլի. իսկ մայրը նայում է եւ լայ լինում... Գիւրդերի վայրենի վարմունքին հակառակորդները կամ

բողոքողները ծեծվում, պատժվում, սուգանքի են ենթարկվում և բանտ նստում:

Ան այդ կեանքից աղատվելու համար բաւականին թւում գիւղացիներ իրանց ընտանիքներն առած գալիս են ցուրտ ձմեռով դէպի Ռուսաստան: Կարմիր վանքի մօտ քիւրդերը յարձակվում են սոցա զբայ, թալանում և սպանում: Միայն երկու կին են ապաստում (Չագի կինը և Բէյրօյի հարսը), երկուսն էլ վիրաւորած: Խիկու ժամանակ ուշագնաց են լինում և կարծելով, թէ մեռած են, թողել են:

Մինաքայ եղից քիւրդերը ազ են տանում եղև Ալաշկերտ ծախելու: Վերադառնալու ժամանակ վանքի մօտ պատահում են անշնչացած դիակներին, վեր են առնում, խնամքով բերում Մինաք: Բէյրօյի հարսը այժմ գտնվում է Կողբում, իսկ Չագի կինը ծանր վիրաւորված Մինաք Շէխ-Ջուլայի գիւղումն է: Վեհարանի և վանքի տակ լիքն են գաղթական Ալաշկերտցիներ: Ստում են, որ նահանգապետը մտադիր է այս ձմեռ ետ դարձնել բոլորին:

ԱՐՃԷՇ. — Սեպտեմբեր ամսու մէջ Յարթին գիւղում եօթը դինված քիւրդ երեսները կապած, կէս դիշերին կոտրում են վանեցի Մահմեդի Նալբանդեանի և իր ընկերով տան դռները: մերկ սրերը դնում են սրանց բկերին և սպանում վզները կտրել, եթէ ձայն հանեն: Մնացած հինգ քիւրդերը այս խեղճ սոււտրականների բոլոր սարանքները սրբում են: Նալբանդեանի երիտասարդ ընկերը փորձ է անում խնդրել, որ գուժ ունենան, մի բան թողնեն: Բարբարոսները սրան այնչափ են ծեծում, որ ուշաթափ վայր է ընկնում: Միւս օրը թալանվողները բողոքում են թաղուր աղատուն, որ վանք քաղաքի հին թաղուր աղատի Ինչալար օղլին է: Կողբալովածները հանդիպում են մի փորձված գիւղացու, որն իրողութիւնը լսելով՝ ասում է. «Եթէ ձեր ձեռքով կարող էք մի բան անել, այն՝ ք, թէ չէ՝ հոս դատաստան չը կայ: Գլխաւոր աւաղակը Ինչալար օղլին է, ոստիկանապետը, որն եկած է իւր թէ մեր երկրում խաղաղութիւն պահպանելու: Նա ինքն է Համիդիէ քիւրդերից աւաղակներ պահող և բանասնողը:

Արճէի բոլոր գիւղերում կալերի ժամանակ տարածվում են Հէյբարանցի քիւրդերը և անխախտ ամեն ունեցող գիւղացուց 30-էն 50 փութ ցորեն տանում: Իրենք Համիդէի գորք են և գինված, մերժողին մահ են սպանում: Պատահում է, որ միեւնոյն գիւղացին երկու երեք անգամ այդ բռնի տարիք տալիս է: Շատ գիւղացիներ հացից դրկվելով՝ մտակայ քաղաքներն են փախչում:

Նոյն Յարթին գիւղում Օգոստոսի վերջերին գիւղի քահանայի եղբոր երեք որդիքը գոմէշներով դաշտից ցորեն են բերում: Քիւրդերը դարան մտած լինելով՝ յարձակվում են սրանց վրա և գոմէշները քշում: Երեք եղբայրներն ևս ընկնում են սրանց ետեւից, քայով հալածում ու մինչև իսկ երեք գոմէշները ետ դարձնում: Քիւրդերը տեսնելով, թէ առանց դէնքի դիմելու իրանց չպիտի յաճողի աւարը տանել, կրկին յարձակվում են և գիւղացուներին ժամանակ մէկին գնտակով գետնին գլորում ու գոմէշները տանում:

— Սեպտեմբերի մէջ քրդերը մի պարտիզպանի սպանում են Ամբող գաւառի մէջ ամենայն օր մահն ու թալանն անպակաս է:

— Սեպտեմբերի 20-ին Հասպարան գիւղում գիւղերը քրդերը մտան Յակովբ Թութլուղեանի և նրա ընկեր Ներոնէսի խանութը, Յակովբի գլուխը կտրեցին և բոլոր սարանքները մօտ 40 լիւայի, տարան: Քրդերը չբաւականանալով սրանով, կողոպտած էին և խեղճերի հագուստները, թողնելով միայն տակի շապիկն ու վարտիկը: Հետքից հասկցած էին, որ մօտակայ գիւղի աւաղակ Շաւէշի մարդկին են, բայց ո՞վ է աւաղակների փնտռող կամ պատժողը:

— Հոկտեմբերի սկզբներին Հայոց Չորի մէջ Սեքայ նախիրը և Բերձայ ոչխարները տարան քիւրդերը:

— Հոկտեմբերի 7-ին Փնտանգաւտ կոչված գաւառակում Շետան գիւղի 700 ոչխարները քիւրդերը տարան:

— Հոկտեմբերի 6-ին աւառուտան արշալոյսին Շուշանց գիւղի ոչխարները տարան և հոլիւր վիրաւորեցին: Շուշանց գիւղը բոլորովին մօտ է քաղաքին:

— Հոկտեմբերի սկզբներին Սոջաք գաւառի Բոսի և Հիւրթուկ գիւղերի ոչխարները տարան:

— Նորդեղայ գետտուկի (կիրճ) վրայ դրված կործոն տեղափոխեցին Վարադայ վանքը: Կարմիրաւոր վանքինն էլ արդէն փոխադրուած է վանքը: Այն երկու վանքերը միմեանցից | ժամ հեռի են Մնում են դեռ Սոջաքաւառակի, Արճալի և այ տեղերի կործոնները: Կործոնների պահպան գափաթիւները բոլորն էլ բանութեամբ սպորում են վանքերի և գիւղերի հաշով:

— Արճէլ գաւառի երկու մեծ աւաղակները (Համիդիէ գորքի փաշաները) էմին և Հասան փաշա 91 թւին իրենց աւերումն քնեցի և սպանութիւնների պատճառով կառավարութիւնն իւր թէ աքտուեց: Մի քանի ամսից յետոյ դրանք գաղտնագողի վերադառնում են Արճէլ և նորէն շարունակում իրենց նախկին հարստահարութիւնները: Պատում են թէ այս օրերս էմին փաշան ձերբակալված է բայց Հասան փաշան դեռ կը մնայ:

Վ. Ա. Ն. — Վալի Բահրի փաշան ամիս և կէս է գորս, եկած գաւառները զբոսով ժողովրդին խաղաղացնելու, երկրին ցաւերը նոյն իսկ տեղի վրայ տեսնելու և հոգալու: Ժիշն է ըսել քիւրդերու մէջ ներքին կռուիքը առաջացնելու և հայոց դէմ զրգուելու համար:

Ո՛չ մի հայարնակ տեղ կանգ չէ առած. իւր ճանապարհորդութիւնն սկսեց Վանի հիւսիս-արեւելեան կողմից, Ապաղա գաւառ, Սարա, Աղբակ, այս տեղերէն պիտի իջնի Շատախ և Ռշտունիք: Վալի բանւած ուղեւորութեամբ այս գիծը Տաճիկ-պարսկական սահմանի վրայ կհիսայ, ուր շատ քիչ հայ կայ և բոլոր տեղերը քիւրդերով բռնված են: Հեռու տեղերէ խումբ քիւրդեր կը հրախորէ և հրահանգ կուտայ. կերպուեցին համիդիէ քիւրդ գորքերուն հաւատարիմ մնալ կտուալարութեան: Բաշկալա եղած ատեն Ատորոց Մարշիմօնին հրաւիրեց և երկար ժամանակ բռնի կը պահէ, ասոր համար Ատորիները շատ զրգուած են: Եղիմեների գեղապետին բանտարկեց և բռնի կը տախէ, խաւամութիւն ընկունել: Պարզ կերեւի, որ կտուալարութիւնը կաշխատի պնտութեան զանազան տարերաց մէջ յուզում յառաջ բերել:

Շարունակում ենք 3-րդ համարից ընդհատված նուիրատութեանց ցուցակը:

Մրդ-ից 203ր. Զ. քթ. 100ր. Կա. 40ր. Փունջ 19ր. 5կ. Մաճկալ 16ր. Հայաստան 36ր. Խաչագող 120ր. Ախ. 600ր. Արմ. 500ր. Բ. ք. 63ր. Կրսք. 1000ր. Գնկ. 170ր. Շէն գ. 40ր. Սպ. 1000ր. Տմ. 260ր. Նվր. 50ր. Ան. 55ր. Լգ. 32ր. Ստպ. 240ր. 2. դիւղ 181ր. Արճան 20ր. Ծառ 80ր. Քր. 270ր. Նխ. 2123ր. N. 20ր. Կայծիկ 50ր. Բ. ք. 30ր. Խումբ. № 1 40ր. Կայծիկ 140ր. Անթ. 14ր. Հաւատ 16ր. Զնդան 23ր. Մուրադ 10ր. Էւսֆ. 10ր. Բահ. 1070ր. Վչ. 100ր. Գ-ից 15ր. Աղ. 13ր. 20կ. Անդր. երկ. 2115ր.

(Կը շարունակվի)

Տեղի սղութեան պատճառով անկարող եղանք հրատարակել ներկայ համարում Վասպուրականից ստացած թղթակցութիւններն ու տեղեկութիւններն, որոնք լոյս կը տեսնեն առանձին յաւելուածով Փետրվարի սկզբին:

Գաշնակցութեան անձանօթներից խնդրվում է թըրթակցութեան և նուիրատութեան համար դիմել:

L. Boole, 14, Augustus Rd., Hammersmith, W. London.

ԴՐՈՇՆԻԿ

Հ.Յ.Պ. ԲԵՆԻՐՅՅԻ
ՊՐԻՆԿԻՍԻՍ
A. R. F. BUREAU
LIBRARY

„ ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ “ ՕՐԳԱՆ

Զ Ո Վ Ե Ր

Սրանից մի քանի ամիս առաջ Մարգուանում տեղի ուեցած արիւնահեղ կռիւի ժամանակ զոհ գնաց ժընեվի նախկին ուսանող Բ. ԶԱՔԱՐԵԱՆԸ: Հանդուցեալը ոգեւորված հանրամարդկային վսեմ գաղափարներով և համոզված՝ որ այդ գաղափարները հասարակական կեանքում կարելի է իրականացնել միայն արիւն թափելով, դեռ շատ վաղ, 22 տարեկան հասակում, իրեն ձգեց կըռուի դաշտը, ուր, աւաղ, երկար չապրեց: Նա ընկաւ, քաջբար պաշտպանելով իր ընկերներին:

— Փոքր-Ասիայում գործող յայտնի յեղափոխական Հմաւոնը ձերբակալված է և յանձնված Ռուս կառավարութեան, իբրև նրա հպատակ:

— Եւրոպական թերթերին հեռագրում են, որ Եօզղագում տաճիկները սպանել են 125, վիրաւորել 300 հայ:

Տ Ա Ճ Կ Ա Կ Ա Ն Դ Ա Տ Ա Ր Ա Ն

Վոռուբաշի արէտալի դէպքից բազմի. բերմամբ ազատուած աղջիկները նախնական քննութեան մէջ յայտնեցին, որ այդ անգութ սպանութիւն գործողները բոլորն էլ քիւրդ էին, թուով 8: Դոցա մէջ որոշ ճանչցած են Վարագայ երկու քիւրդ պահապան ծառաները. մէկն այս տարի էր վարձուած, մէկալը անցեալ տարուայ դուրս արած կեղտոտը:

Աղջիկներու ըսածն ստուգելու համար, դատարանը քանի մը քիւրդեր կը ներկայացնէ, առաջարկելով ճանչնալ մեղադրուածները: Անոնք կը պատասխանեն, թէ դոցանէ և ոչ մէկը չէ: Երկրորդ անգամ քանի մը քիւրդեր կը ներկայացնէ, խառնելով նրանց հետ երկու ամբաստանեալները: Աղջիկները ճիշդ կարձակեն, տեսնելով երկու անգութ չարագործները նոցա մէջ և մատնացոյց կընեն Վարագայ հին և նոր պահապաններուն: Վրեւնեն այդ երկու քիւրդերու թեւերը և չկրնալով իրանց արտասուքը զսպել, դառնապէս կուլան:

”Սա էր, սա, այս անաստուածը, թշուառ եղբորս իմ աչքիս առջև նաճախով (փոքրիկ կացնի նմանող գէնք մ”է) բրդեց, որն ինձի օգնութեան կը կանչէր, որովհետև թեւերը կապած էր.” կըսէ աղջիկներէ մէկը լալազին:

Անմեղ սպանութիւնը, աղջիկներու պատուոյ բռնաբարումը և այս արտասուքից տեսարանը սաստիկ կազդէ ներկայ եղող միջև անգամ վատ թիւրքերու վրայ:

Սակայն ե՞նչ կընէ կեղտոտ և լիբր Բահրի փաշան, վալին, որը դատարանի վզին նստած, ուր ուզէ կըքշէ: Երկիւղ կրելով եւրոպական հասարակական կարծիքից, կը ձգտի լկտիաբար հայոց վերագրել այս եղեռնագործութիւնը, կամ եթէ այդ չը յաջողվի՝ անորոշ չարագործներու արարք համարել, ինչպէս որ (վալիի կարծիքը) լուսաւորեալ Եւրոպայի մէջ էլ կը պատահի նոյն տեսակ չարագործութիւններ:

Առաջին նամակով ըսինք, թէ քիւրդերը հետքը տարած էին միջև Վարագայ ոչխարի փարախը, որն անշուշտ նպատակով էր արված: Վալին, թողնելով աղջիկներ լուսոյ նման պարզ և ճշմարիտ փաստերը, այդ հետքը բռնեց փաստ և առանց այն էլ անարդար դատարանի վրա ճնշում բանեցնելով, մէկէն ի մէկ խնդիրը բլեցոց Վարագայ վանքի վրա, որ բոլորովին անմեղ է:

Բահրի փաշան ձերբակալեց միաբան վարդապետէն սկսած միջև գառնարածը, փոխանակ արիւնարբուններու ետեւից ընկնելու: Այդ ասիական զգուելի խարդախը մի այլ նպատակ ևս ունէր, որով խնդրի բուն կէտէն կը շեղվէր: Միջոց տալ եղեռնագործներուն սահմանն անցնել, վիլայէթէն դուրս ելնել, որ հակառակ պարագային, եթէ խնդիրը ծանրանայ, չարագործները ձեռք չիյնան և հազարաւոր փաստերու վրա մէկն ալ չաւելնայ, թէ քիւրդերու որոշ մասը կառավարութեան դրդմամբ կը հարըստահարեն, կառուանգեն, կըսպանեն, մի խօսքով երկիրը կաւերեն՝ անարդար կառավարութեան հետ ձեռք ձեռքի տալով:

Վալին Վարագայ բանտարկեալներուն կը մեղադրէ, թէ հայ կաշախները վանքում ապաստան գտած, միաբանութեան հետ խորհած՝ այս սպանութիւնը գործել են, որպէս զի Եւրոպայի առաջ թիւրք կառավարութեան վարկը ձգեն: Սակայն այսպիսով բան մը չը կըրցաւ շինել, մանաւանդ թէ վերջին ծայր անարդարութեան, վալիի բաշիբօզուգ վարմունքի համար փողովորդը գրգռվեց: Այն ժամանակ նա թողեց Վարագայ անմեղ բանտարկեալներուն, պահելով միայն Վրթանէս վարդապետը, դռնապան Դարմօն, տնտեսին և երկու նոպատարներուն: Անցեալ տարուայ արձակած նոպատարին հանած են բանտից, որիւ աղջիկները ճանչեցին, և վալին այդ քիւրդին զապտիան յի պաշտօն է տուած. իսկ բանտի միջի նոպատարներից մէկը, որ վանքին ծառայած է հաւատարիմ, դեռ կը պահվի երեւի մեղաւոր է, որ վանքը չէ կողոպտած:

Մնացած բանտարկեալներու բերնէն նոր կազմած խոստովանութիւն մը կուզեն առնուլ: Իբր թէ 8 հայ կաշախներ զինված Արաբաց լեռնէն վար կիջնին վանքից հաց առնելու ճիշտ սպանութեան նախընթաց գիշերը: Նրանք երկար գոռը կը բաղխեն, բայց դռնապան Գարմօն դռնը չի բանար: Արթանէս վարդապետը կը զարթնի և, իմանալով եղելութիւնը, կըսէ. «Դուռ միջ բանար այդ անպիտաններուն և հաց մի տաք:» Այն ժամանակ հայ կաշաղները վարդապետը կըսեն. «Միթէ դուք հայ չէք, հայի սիրտ չունիք. մենք ձեռք ենք քաշած երիտասարդական քաղցր կեանքէն, թողած ենք տուն, տեղ, հայր, մայր և ամուսին, հայրենեաց սիրոյ համար ելած ենք սարերը և դուք մի պատառ հաց կը խնայէք մեզի. որչափ անգրթութիւն:»

Արթանէս վարդապետ զգած վերով այս խօսքերէ, կառավարչէն գաղտնի հաց կառնէ և շուսամուտէն կը ձգէ կաշաղներուն, որոնք միւս օրը երկու քիւրդ պահապաններու հետ այդ սպանութիւնը կը գործեն:

Մինչև հիմայ այս կեղծ խոստովանութիւնը չեն կրցած ըսել տալ այդ երեք բանտարկեալներուն. սաստիկ կուտանջեն խեղճերուն:

Անցեալ օր առանձնացած սենեկի մը յատակը ջրով կը սրսկեն, այնպէս որ ցեխ կը լինի. երեկոյեան դռնապան Գարմօնին կը տանեն հոն: Այս մարդը հասակն առած, ուժասպառ և կաղ է: Արթնէն անոր ձեռնափայտը, որով կը գժուարանայ քայլել և մինչև լոյս այդ սենեկին մէջ կը տանին ու կը բերեն, չը թողնելով վայրկեան մը կանգ առնելու և քնանալու: Խեղճ կաղը կոնդաղների և փայտի հարուածներու տակ ստիպված լինելով արագ շրջաններ ընելու, շուտ շուտ կը սայթաքի և վայր կընկնի, որի ժամանակ անգրթ դահիճները հարուածներ տալով նորէն կը կանգնեցնեն: Երբեմն վերջին ծայր յոգնելով այլ ևս անկարող քայլ մը ընելու, պաղատող դէմքով կը կըրթնի պատին վայրկեան մը հանգստանալու և հաց կը խընդրէ, որովհետև կրկար ատեն քաղցած թողած է. խեղճին: Արք կը լսէ, և ծանր հարուածները կը ստիպեն շարժուելու: Երկու անգամ կը նուաղի և ուշաթափ կիյնայ. ուշքի բերելով նորէն կը շարունակեն: Չափախները շուտ շուտ կը փոխվին և մինչև լոյս կը տանջեն: Գարմօն կեղծ խոստովանութիւնը յանձն չի առնի ոչ մի կերպ:

1891 թ. ձմեռը Շատախ գաւառի Թաղ գիւղաքաղաքում մի միլեազիմ սպանվեցաւ, որի խնդիրը մինչև այժմ կը լուզվի: Դորա պատճառով, ինչպէս արդէն յայտնած եմ նախընթաց թղթակցութիւններովս, 92-ի աշնանը 7 երիտասարդ թաղեցիներ, 17-է մինչև 21 տարեկան հասակով, ձերբակալվեցան: Արջին օրերս սպանութեան խնդիրն անցաւ վերաքննիչ ատեանը: Յատկապէս վկայութեան կանչվեցաւ Թաղի գայմապամ Բաշիտ Բէյը: Ահա նորա զրպարտիչ և սուտ վկայութիւնը.

Միլեազիմը սերտ յարաբերութիւն է ունեցել այդ երիտասարդների շրջանի հետ, նրանցից առևտուր է արել, հետները կերել-խմել է և այլն: Թէ այդ 7 հոգին ծածկած ձեռի տակ յեղափոխական մասնախումբ են կազմած, որոնց կանոնադրութիւնը բռնած է: Ահա նրա կէտերը:

Մասնախումբի նպատակն է յեղափոխութիւն քարոզել գիւղացիների մէջ, ընկերներ աւելցնել, ամսավճար հաւաքել, զէնք առնել. եթէ տաճիկը հային սպանէ, մենք էլ տաճիկն սպանենք. եթէ տաճիկը քիւրդը հայի դէպ վառէ, ոչխարը տանի, մենք էլ նրանց նոյնն անենք: Մասնախումբը պիտի ունենայ ատենապետ, ատենադպիր և գանձապահ: Եթէ յարմար մարդ չգտնվի ատենապետ լինելու, այդպիսին Անէն հրաւիրենք և այլն:

Այս կանոնադրութեան տակ այդ 7 երիտասարդներէ 4-ի իսկական ստորագրութիւնն էր: Ահա մի անհիմն վկայութիւն, որին այնչափ խիստ կարևորութիւն տւին տաճիկական փիլիսոփայ դատաւորները: Այս վկայութիւնը երիտասարդ բանտարկեալները հերքեցին ցոյց տալով, որ այդ սպանութեան ժամանակ իրանք տուններն են եղած, գործով զբաղված, որի համար և վկաներ ցոյց տուած են: Միևնոյն ժամանակ ցոյց տալով, որ միլեազիմը մի թուրք կնոջ հետ յարաբերութիւն ունէր և թէ այդ տան մէջ գաղտնի սպանած ու Տիգրիս գետն են ձգած: Իրենց խումբը յեղափոխական մասնախումբ լինելն ու կանոնադրութիւնն ևս հերքեցին, ըսելով թէ հին ժամանակներէ սովորութիւն կայ թաղամէջ, որ ջահիլները խումբեր կը կազմեն բարիկենդանին, ծննդին միասին զուարճանալու, երգել, պարելու, թէյ խմելու և այլն: Իսկ կանոնադրութիւնը կեղծ է և այդ շինել է Բաշիտ Բէյը հետևեալ կերպով: Դա մի օր այդ ստորագրող երիտասարդներին գաղտնի կանչում է հեռագրատան սենեակը և բռնի չորսի ստորագրութիւնն առնում է չգրած թղթ թի վրայ, իբր մի վերին աստիճանի անվնաս բան: Ապա ստորագրութեանց վերելը այլ մէկու մը գրել կուտայ կեղծ կանոնադրութեան յօդուածները:

Մի բան չգտան այս երիտասարդներուն վճիռ կայացրելու, այդ պատճառով զրկվեցան բանտ:

Անեցիներու վրայ մեծ տպաւորութիւն թողեց փոքրիկ Ապրջի (17 տարեկան) քննութիւնը. նա շատ ճարտար և խելացի կը խօսէր ու լաւ տաճկագէտ է:

Օրերս բանտի միջէն մէկ նոր խնդիր, «Կօմիտա»-ի խընդիր ևս փրթաւ: Տաճիկները «Կօմիտա» ասելով յեղափոխական ընկերութեան անդամ են հասկանում: Մանուկ Բօշեան 13 հոգու, որոնք այժմ բանտարկված են, մասնած է իբր «Կօմիտաներ»: Գատարանը իրեն էլ դրանց շարքն է խօթած, ուրեմն 14 հոգի:

Այժմ այդ 14 հոգին, որք են Մանուկ Բօշեան, Յարութիւն Սօլկարեան, Ա. Ետիս 2 թշի-Գարսեան, Նշան, Գէորդ Էյնաթեան, Չապիջեան, Գաբրիէլեան և այլն, քննվում են: Մ. Բօշեան սաստիկ յանդիմանվելով իւր անարդար մատնութեան համար, խոստացած է ուրանալ իւր մատնութիւնը: Շատերն այն կարծիքի են, թէ այդ անմեղները երբեքական տարի վճիռ կը ստանան:

Գ Ա Յ Լ Ե Ի Գ Ա Ռ Մ Է Կ Տ Ե Գ
Կ Ա Ր Ա Ծ Ե Ն

«Գայլ և գառ մէկ տեղ կարած են:» Այս ասացուածքը թէև թրքական կոպիտ ձևով է ասված, բայց որչափ բարձր սկզբունք, հաւասարութեան յարգանք է երևում

սորա մէջ: Ասել է, թէ Տաճկաստանի մէջ ընդհանրապէս իսլամն ու խրիստոնեանը խաղաղ, անդորր, եղբոր պէս կապրին. ասել է, թէ հաւասարութիւնը կատարելապէս կը տիրէ Թիւրք պետութեան մէջ. Թիւրք ու հայ, ասորի քիւրդ և եզդիի կապրին առանց կրօնի, սոցաութեան և իրաւանց խտրութեան. . .

Ահա թէ ինչ կաւետէ տեղուս "ժողովրդեան" կողմէն Բահրի փաշայի ձեռամբ վերջերումս ուղարկած մի հանրագրութիւն:

Բայց պէտք է բացատրել, թէ ինչ բան է հանրագրութիւնը (մազմաթան) վալիներու այդ թղթամէն:

Երբ նահանգապետը կամ իւր վարչութեան անդամներէն մէկը մեծ զեղծում գործէ, երբ հայր ծանր հարստահարութիւններու, սպանութիւններու, առեւանգումներու և ասպատակութիւններու համար Պօլիս բողոքէ, Բ. Դուռը խիստ լեզուով բացատրութիւն կը պահանջէ տեղական վարչութիւնէն: Նահանգապետն այդ վտանգէն իբր պատվելու համար, մի ապտակ է հասցնում բողոքող ժողովրդի երեսին, մի "մազմաթան" է պատրաստում, որիչ ոչինչ: Հանրագրութիւնը պատրաստելէն վերջ ստորագրել են տալիս հայ դաւաճաններին և վատ թիւրքերին. շատ անգամ ստորագրողների թիւը 1000-ի հասցնելու համար բռնութեամբ շատ հայերին, նոյն իսկ բողոքողներին են ստորագրել տալիս. հակառակողին բանտ են ուղարկում: Այնուհետ թղթամէն ուղարկվում է Բ. Դուռը, որով խեղդվում է ճնշված ժողովրդի ձայնը, բողոքը: Մազմաթանները ուղարկվում են մեծ մասամբ հիւպատոսների, Եւրոպայի առաջ արդարանալու համար, եթէ ոչ սուլթանի փթած կառավարութիւնը իրաւունքների խտապահանջ չէ. ընդհակառակը, զեղծումներն ու հարստահարութիւնները մեծ մասամբ Բ. Դուռից են բղխում և ծաւալվում երկրի խուլ անկիւնները: Ահա այսպէս, ամեն տեսակ չարագործութիւն կարելի է գործել և մազմաթանով արդարանալ: Հանրագրերի նկատմամբ տաճկահայ լաւատեսների բերնում մի ճշմարտութիւն պարունակող առասպել է գոյացել: Լօնդօնում Յ հայ ներկայանում են Գլադստօնին. ներսից դուռը փակելէն վերջ, սեղանի վրա դնում են մի միասնակար բովանդակութեամբ թուղթ և պահանջում խստիւ ստորագրել: Նախարարապետը այլ-այլվում է այս կոպիտ վարմունքից և բացատրութիւն պահանջում: Երբքն էլ ատրճանակները դէմ են անում ծերունու կրծքին. Գլադստօն մահուան տագնապից բռնված ստորագրում է դողողալով: Հայերն իսկոյն ներողութիւն են խնդրում այդ ձեւաբանութեան համար, կամենալով ցոյց տալ, թէ Տաճկահայաստանում ամեն մազմաթան այսպէս է ստորագրվում և գերի հայի ձայնը միշտ պայպիսով է խեղդվում:

Դիմենք իրական կեանքին և տեսնենք Բահրի փաշայի կազմած մազմաթան ճիշտ է արդեօք. ճիշտ է, որ գաւառն ու գայլը մէկ տեղ կարած են . . .

Մայիսի մէջ Ռսկերանի գիւղի եղնարածին չարաչար վիրաւորելէն վերջ՝ եղները տանում են քիւրդերը: Շատախի մէջ քիւրդ Փախկինները Յեպակին գիւղացուն Սիսիարիկայ ձորի մէջ սպանում են, գործը մնում է անհետեւանք: Կոռուքաշի հերոսները գեռ և սանապտիճ պար-

տում են և նրանց փոխանակ անմեղները տուժում: Մայիս ամսին, երբ Աղթամարայ դաւաճան Խաչատուր կաթուղիկոսը Բահրի փաշայի հրաւիրանօք Վանոււմ նստած հանրագրութիւն էր պատրաստում, թէ հայ քիւրդ և թիւրք եղբոր պէս են ապրում, հենց այդ ժամանակ կեաւալու (Ռշտունիք) Կուլիխան-բէյի տղան իր կաթուղիկոսի, եղբոր երկու որդիներանցը վիրաւորեց և հարսը օր ցերեկով փակցրեց:

Աւերակի գիւղի, որ կրննի Անիից հիւսիս 2 ժամ հեռաւորութեան վրա, հիւս Սարգիսը անցեալ տարի աշնանը անդետաբեր մատնութիւններ բրաւ Յ, 4 գիւղի նրկատմամբ: Մատնվեցաւ և Սաթմանց գիւղի նախկին ուես Ազիզ Մարկոսեան, որը մօտ 50 տարեկան մարդ էր: Այլից տեսնելով իրենց գիւղի ուես Կարապետի, Հասպատան և միւս գիւղերի բանտարկեալների անիրաւի տանջանքները, միևնոյն ժամանակ չհաւատալով մազի չափ տաճկական կեղծ արդարադատութեան, խոյս տուեց, երբ ոստիկանները եկան զինք բռնելու: Նոյն Սաթմանց գիւղի Մլանցոց Մահմէդ աղէն, քաղաքիս վալիի բարեհաճութեամբ խլեց Ազիզի ձին, ամենալաւ գոմէշը, ականջ չընելով ընտանիքի դառն արտասուքին. ապա հետզհետէ աղան փախստականի բոլոր ոչխարները խառնեց իր հօտին, սեփականացրեց և տան մէջ մի քաղցած քիւրդ ընտանիք դրեց իբր պահապան, որ Սզիզի ընտանիքը չը փախչի Պարսկաստան: Այդ լիբը քիւրդը պարելով հայ նահապետական մարուր ընտանիքի մէջ, ուր կան ջահիլ հարս և աղջիկ . . . կապրի նոյն ընտանիքի հաշով: Ազիզի ջահիլ տղան, որ տան միակ չափահասն էր, շաբաթներով և մի քանի անգամ Սարա աւանի մէջ կը բանտարկվի, մեղադրվելով թէ հօր տեղը գիտէ և չի մատնիր կառավարութեան: Անցնին ամիսներ, տղան բանտից կելնէ: Կառավարութիւնը տեսնելով, թէ անհարին է Ազիզին ձեռք բերելը, նրա ընտանիքը կը թողնի բողոքով Մահմատ աղի կամնյականութեանը: Աերջինս բռնի գրաւեց Ազիզի բոլոր հողերը և սորա տղային այնպիսի ծեծ մը կուտայ, որ լեզուէ, բերնէ կրնկնի, հիւանդ կը պարկի և բարբարոս քիւրդը խստիւ կը հրամայէ մէկ շաբաթուան մէջ գիւղից հեռանալ: Այսպիսով Ազիզի շէն տունը, որ ունէր ոչխարի հօտ, գութան, կովեր, եղնք և գեղեցիկ հողեր, այժմ մի քանի ամիս չկայ, աղքատ, մեղկ և պատառ հացի կարօտ, շիւարած է, թէ որու դիմէ և ուր ապաստանէ . . .

Լրագրաց մէջ կառավարութեան պաշտօնական մէկ յայտարարութիւնը կարգացինք, թէ Սուլթան Համիդի անուամբ կազմված զօրաբանակին մի գունդ ևս աւելացուցաւ Վանայ վիլայէթին մէջ, Թաֆուրի հրամանատարութեան ներքոյ: Ամենքս սարսափով կը հետաքրքրվէինք, թէ ուր է Սուլթանի նոր գունտը և ո՞վ է Թաֆուր: Շատ չանցաւ, Թաֆուրն իրեւեցաւ Հայոց ձորի մէջ (Վանէն 4 ժամ հեռու դէպի հարաւ արեւելք): Նրա մարդիկը 25-էն 30 կը հասնի, որոնք կազմված են գող մութրուքներից, աւազակ, մարդասպան քիւրդերից, որոնց կառավարութիւնը այնչափ աւատօրէն ներում կը շնորհէ. Իսկ ինքը հրամանատարը աւազակներից աւազակապետն է: Նա ասկէ քանի մը տարի առաջ արիւնջուռ շա մարդասպան և թա-

լանող էր. նոյն իսկ Օսմանեան կառավարութեան սկսած էր նեղութիւն պատճառել, այնպէս որ ձեռք չընկնելու համար "կաշաղ" էր դարձած: Աղթամարայ վեհափառ կաթողիկոսը գիտնալով հանդերձ Թափիւրի հայոց հասցրած մեծ վնասները, երկար ժամանակ գաղտնի պահեց անապատ կղզու մէջ և անցեալ տարի ներումն բերել տուեց այդ աւազակին:

Թափիւր պաշտօնապէս կը հաղորդէ, թէ Վանայ վալին իրեն նշանակած է Հայոց Չորի մէջ խաղաղութիւն պահպանելու համար: Եւ ահա, թէ ինչպէս կը կատարէ:

Մէկ օր երեկոյեան մուտ ժամանակ 5 խօլամներով (և ծառայ և թիկնապահ կը նշանակէ) դիւղի մէջ վեց հարուածեան կը պարպէ և շփոթ կը հանէ: Գիւղացիներն այս անգամ իրենց գոռու կողմէն, Թափիւր անմիջապէս մի քանի յայտնի հայերու կը բռնէ և թեւերը կապել կուտայ, ըսելով. "Գուք ծածուկ հայ կաշախներ պահած էիք, որոնք այս րոպէիս յարձակվեցան մեր վրա, զէնք պարպեցին և փախան, հօգիւ մահից ազատվեցանք: Հիմա ձեզ կապած պիտի վալին տանեմ և ձեր ոսկորները բանտի մէջ փթեցնել տամ": Գիւղացիները քաջ գիտնալով Բահրի փաշայի անգթութիւնն և անարդարութիւնը, միջնորդ ձգելով ամեն մէկը 4-6 մէծիտ փրկանք կուտան և հազիւ օձիքները կազատեն:

Մի ուրիշ անգամ Թափիւր իր խօլամներուն կը սովորեցնէ հայերի փարախներէն քանի մը հատ լաւ ոչխար հանել: Մարդիկ ճշտութեամբ պատուէրը կը կատարեն: Գիւղացիներ կը հասկնան, թէ այս գողութիւն ընողը Թափիւրն է, սակայն աւազակապետը նորէն կտրուկէ, թէ շուտ գողերը պիտի գտնէք, հայեր, ես խաղաղութիւն պահպանելու համար զրկված եմ և իմ պարտքը պիտի կատարեմ: Հայերուն և բնիկ քրիւրներուն դատի կը կանչէ: Քիւրքեր տեսնելով Թափիւրի լիտութիւնը, չեն երթար և կըսեն. Թափիւր մոխանաթ աւազակ է, ոչ թէ դատաւոր: Հայեր վախից կերթան և փրկանք տալով կազատվին:

Այդ մարդ Բահրի փաշայի քթի տակ այս տեսակ անթիւ էրբութիւններ գործելէն վերջ՝ կարգ մ'ալ ընդդիմադրութիւն ցոյց տուող մարդիկ չը մասնէ կառավարութեան ձեռքը, ինչպէս Աղմըցի Մուրադին, Շահէին:

Ստուգվեցաւ, որ սա 92-ի աշնան Բահրիի հրամանով Վանայ մէջ խաղաղութեան մը մասնակցող Թափիւրն է, որ քացիով հայ կին մը վիժուց:

Գօլթի հիւպատոսները պահանջեցին այս հին աւազակին ձերբակալել: Բահրի փաշան հայոց-հարուստ գաւառանների ձեռքով հանրագրութիւն մը շինեց, թէ ոչ այդպիսի կին կայ վիժած և ոչ Թափիւր քաղաքի մէջ:

Մերանցոց էլաղասի (ցեղապետ) Մուստաֆա փաշան չափազանց կը սիրէր Թափիւր (Շատախի գիւղաքաղաք) Արրահամ մահոտի Շահէնեանին և կը զարմանայ, թէ ինչու վերջինս ուրիշ տարիների պէս չի գայ իրեն տեսութեան: Անցեալ օրեր մարդ կը զրկէ ետեւից. Արրահամ կը բացասէ, ըսելով. թէ աւազակ Շաքիրի հետ գտնված է, թէ և հաշտութիւն ըրած և այդ վատ քիւրքը իրեն բաղդ է տուած, բայց չի հաւատար, որովհետեւ Շաքիր միշտ սեպպերախտութիւն ցոյց տուած, իր խօսքն դրժած է, այդ պատճառով չիցանկար ճանապարհորդութիւն ընել:

Մուստաֆա փաշան ցաւելով այս բանի վրա, լուր կը ձգէ Թափիւր գայմագամ Բէշիտ էֆ., որ ապահովեցնէ և հաւատարիմ մարդու ձեռքով զրկէ իր սիրելի բարեկամին: Արրահամ կը համաձայնի և Բէշիտ էֆ. նորահետ կը դնէ Շաքիրի հօրեղօրը: Արրահամի հետ էին նաև իր եղբայր Աղիզը, Օհանը և մի ուրիշ հայ, թուով չորս: Անցնելով Վաճէտ գիւղը 2 ժամու չափ, կը հասնին Տիգրիսի ափը, ուր մէկէն ի մէկ իրենց դէմ կենէն Շաքիր 8 ձիաւորներով, զինված մարթիինի հրացաններով: Շաքիր խարդախ ժպիտով մը կը բարևէ, քանի մը խօսք, և յանկարծ հրացանի կը գիւժէ, նշան ընելով ընկերներին: Չորս հային ալ տեղն ի տեղը գնդակահար կընեն: Աւելիկց Շաքիրի ազգականն անգամ զարհուրելով այս եղբունագործութեան վրա, շնչասպառ կը հասնի մօտակայ գիւղը և լուր կը ձգէ Բէշիտ էֆէնտուն, թէ Շաքիր 4 հային ալ սպանեց:

Ի՞նչ կը նշանակէ այս: Այս թելի կծիկ Վանայ վալին մօտ է, իսկ գործադիրը Բէշիտ գայմագամ:

Սպանվածների կանայք երեսներով թափված են քաղաք: Դրանց բերող 5 երիտասարդք անմիջապէս բանտ են նետված: Դիակները քաղաք բերելու ժամանակ ձանապարհէն բռնի ետ են տուած:

Բողազբեասան մէկ հայի քիւրքը վիրաւորեց: Ասուածածնայ գիւղի գութնուորներից մէկին քիւրքերն սպանեցին և միւսին վիրաւորեցին: Յուլիսի մէջ Աւարագայ նախիրի մէկ մասը զինված քիւրքերը օր ցերեկով դաշտէն քշեցին տարան: Նոյն Յուլիս ամսին Սաթմայ գիւղի մէջ քիւրքերը բռնութեամբ առևանգեցին. Չարթար Հասարթի-Խաչատրեանին և Մարիամ Աւօ-Յովսէփեանին և մինչև օրս կը պահեն:

Քիւրքը, թիւրքը կառավարութեան զէնքով կը զինվի, սուր, թէվօլվեր ազատ կը կախէ վրան, իսկ հայի ձեռնէն կառավարութիւնը փայտն էլ կը խլէ:

Ընթերցողը կը զարմանայ գուցէ, թէ միշտ քիւրքն է սպանողը և թիւրքը կառավարութիւնը կը մեղադրվի: Վալին, վարչութիւնն է, որ անպատիժ է թողնում սպանողներին. նա է, որ խրախուսում է, զէնք, անբաւ իրաւունք է տալիս, նա է, որ հրահանգ է տալիս, թէ ում պէտքէ կողոպտել սպանել: Քիւրքը միայն պործիք է նորա ձեռքին և իր աւարի տէրը:

Բանտի մէջ տասնեակ անմեղ բանտարկեալներ կան, որ 8 ամիս, մի տարի է հոն տանջվում են և երբէք չեն քննված: Խուզարկութեան ժամանակ ոստիկանները գողանում են սնդուկից ոսկի, զարդեր, ամեն տեսակ հագուստեղէններ, տանում են ոտնամաններ և ամեն տեսակ ուտեստի պաշար ու կահ կարասիք: Այս ձմեռ օսմանեան վատթար և կեղտոտ վարչութիւնը 10 նշանաւոր հայ բանտարկեալներ մեռցրեց մութ և խոնաւ բանտի մէջ...

Հիմա մենք, Սուլթան Համիդն ու ուրիշ շատերը համոզվեցանք խորին կերպով, թէ գազանաբարոյ Բահրի փաշայի մազմաթէն ձիւտ էր, թէ գայլն և գառը միասին կարածեն, թէ թիւրք, հայ և քիւրք անդորր կապրին...

Դաշնակցութեան անձանօթներից խնդրվում է թըրթակցութեան և նուիրատուութեան համար դիմել:

L. Boole, 15, Augustus Rd., Hammersmith, W. London